Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2025 թ. փետրվարի 27-ի N 13-Լ հրամանի

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՄԲ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ԶԵՎԱՉԱՓ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՄԲ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի

Մասնակցային բյուջետավորմամբ իրականացված և սուբվենցիա ստացած ծրագրի անվանումը

Աբովյան քաղաքում թենիսի կորտերի կառուցում

1.Ծրագրի իրավական հիմքերը Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 11-ի N 191-Ա և 2024 թվականի հունվարի 16-ի N 03-Ա որոշումներ:
ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշում:
(Նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ կառավարության համապատասխան որոշման ամսաթիվը և համարը)

2.Առաջարկ-նախագծի (որի հիման վրա մշակվել է մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծագիրը) հեղինակի անվանումը Ռիմա Մուրադյան, AT0370497
(Նշել՝ բնակչի դեպքում անուն, հայրանուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի համարը, իսկ հասարակական միավորման դեպքում անվանումը և պետական գրանցման համարը)

3.Առաջարկ-նախագծի օգտին քվեարկության արդյունքները և մասնակցային բյուջետավորման գործընթացը կառավարող հանձնաժողովի կազմած արձանագրության համարը Քվեարկության արդյունքների վերաբերյալ համայնքի պաշտոնական կայքի տեղեկատվությունը՝ https://www.abovyan.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=abfe05ca-7f42-4acd-9eaf-db76b40c1507:
Քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը՝ 72882 մարդ, առաջարկ-նախագծի օգտին քվեարկածների թվաքանակը՝ 1276 ձայն, քվեարկության իրավունք ունեցողների 1,75 %-ը:
(Քվեարկության արդյունքների վերաբերյալ համայնքի պաշտոնական կայքի համապատասխան տեղեկատվությանը հղումը, նշել քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը և առաջարկ-նախագծի օգտին քվեարկածների թվաքանակը և %-ը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակի մեջ)

4. Համայնքի/բնակավայրի բնակչության թվաքանակը, քվեարկության իրավունք ունեցողների թվաքանակը Համայնքի բնակչության թիվը՝ 91550 մարդ, ծրագիրն ընդգրկող բնակավայր՝ ք.Աբովյան - 61849 մարդ: Քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը՝ 72882 մարդ:

(Նշել համայնք՝ .... բնակիչ, ծրագիրն ընդգրկող բնակավայր՝ ... բնակիչ, քվեարկության իրավունք ունեցողների թվաքանակը)

5. Ծրագրի սկիզբը և ավարտը Սկիզբը՝ 25.04.2024թ: Աշխատանքների ավարտը նախատեսվում է 31.03.2025 թ:*

6. Ծրագրի նախագծային արժեքը *102 284,3 հազ. դրամ*

7.Ծրագրի նպատակը Մեր օրերում մարդկանց կյանքում գերիշխում է նստակյաց ապրելակերպը, ուստի սպորտի դերը գնալով ավելի է մեծանում և այն կարող է արդյունավետ կերպով անդրադառնալ անհատների առողջությանը:
Ինչպես նաև ծրագրի միջոցով նպատակ ունենք համայնքում զարգացնել սպորտային մշակույթը:

(Ներկայացնել երկարաժամկետ կտրվածքով ընդհանուր նպատակը, որին հասնելուն միտված է տվյալ ծրագիրը)

8.Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը Սպորտը արդյունավետ է անդրադառնում սոցիալական համախմբվածության բարձրացման, համայնքային կառույցների համագործակցության, առաջնորդության զարգացման և քաղաքացիական մասնակցության խրախուսման գործում: Սպորտի վրա հիմնված զարգացումը հաճախ մեծ հետաքրքրություն է առաջացնում բնակիչների, ֆինանսավորողների և քաղաքականություն մշակողների մոտ:
Թենիսը լավ մարզաձև է առողջության, ֆիզիկական պատրաստվածության, ուժի և շարժունության պահպանման համար: Այն ունի սոցիալական և հոգեբանական օգուտներ և համայնքի երիտասարդների համար կարող է հանդիսանալ կապող օղակ, զարգացնել թիմային մտածելակերպը, ակտիվացնել նրանց դերը հասարակական կյանքում: Կկազմակերպվեն ինչպես ակումբային, այնպես էլ ընկերական և ընտանեկան մրցաշարեր՝ որպես սոցիալական գործունեություն:

(Մանրամասն նկարագրել, թե համայնքային նշանակության ինչ խնդիրներ է լուծվել)

9.Ծրագրով հաստատված վերջնական ակնկալվող արդյունքները 01.01.2025 թվականի դրությամբ Աբովյան համայնքի բնակիչների թիվը՝ 92774 մարդ, որոնք կունենա մարզվելու և թենիս սպորտաձևով զբաղվելու համար հարմարավետ և բարեկարգ տարածք: Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի շուրջ 3-5 հիմնական աշխատատեղեր:

(Նշել՝ կոնկրետ, չափելի և իրատեսական ցուցիչներ)

10. Ծրագրի իրականացման փաստացի արժեքը *97 263,5 հազ. դրամ*

11. Ծրագրի փաստացի շահառուները Ծրագրի ուղղակի շահառուների թիվը կազմում է 61849 մարդ, Աբովյան քաղաքի բնակչության 100%-ը, որից 49394-ը 16 տարեկան և բարձր տարիքի անձինք:

(Նկարագրել փաստացի շահառուների խումբը և քանակը)

12. Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները

- Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում - «Եռանկյուն Փրոջեքթ» ՍՊԸ – աշխատանքներն ավարտված են:
- Պարզ փորձաքննության եզրակացություն – «Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ – աշխատանքներն ավարտված են:

---

* Աշխատանքները 95% կատարված է, մնացած 5%-ը ավարտին կհասցվի եղանակային բարենպաստ պայմանների առկայության դեպքում՝ մինչև 31.03.2025թ:

- Կապալառու կազմակերպություն - «Կապիտալ ՇԻՆ Քոնստրակշն» ՍՊԸ և «Բիդեք» ՍՊԸ– աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Որակի տեխնիկական հսկողություն - «Գեղարքունիք-Նաիրի» ՍՊԸ– աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Հեղինակային հսկողություն - «Եռանկյուն Փրոջեքթ» ՍՊԸ– աշխատանքներն ընթացքի մեջ են:

(Նշել փաստացի իրականացված միջոցառումները՝ յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների նկարագրությամբ)

13. Ծրագիրն իրականացնողները և աջակցողները Ծրագիրն իրականացվում է Աբովյանի համայնքապետարանի կողմից:

(Թվարկել ծրագրի յուրաքանչյուր միջոցառման մասով իրականացման մասնակիցների (ՏԻՄ, իրավաբանական անձ, ծրագրի իրականացման նպատակով հավելյալ ֆինանսական միջոցներ տրամադրող անձ և այլն) անվանումները

14.Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը Ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 18.08.2021 թվականի N1363-Ա որոշման 6.6 կետին և համապատասխանում է Աբովյան համայնքի ավագանու 13.05.2022 թվականի N45-Ա որոշմամբ հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի 2-րդ գլխի, 2.1 ենթագլխով սահմանված ռազմավարությունների 5-րդ և 6-րդ կետերին: Տարեցտարի ավելանում է Աբովյան համայնքի բնակչության թիվը և հիմա 92774 մարդ կարող է օգտվել բարձր ստանդարտներով կառուցված թենիսի կորտերից: Համայնքում կզարգանա թենիս սպորտաձևը:

(Նշել ծրագրի համապատասխանելիությունը ՀՀ կառավարության ծրագրով և համայնքի զարգացման ծրագրային և ռազմավարական նշանակության փաստաթղթերով սահմանված նպատակների հետ:
Ներկայացնել ծրագրի ավարտից հետո միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները: Հիմնավորել՝ ցույց տալով կապը ծրագրի շրջանակներում լուծվող խնդիրների և իրականացվող գործունեության արդյունքների հետ: Սպասվող արդյունքների նկարագրությունը պետք է լինի հնարավորինս կոնկրետ, իրատեսական, գնահատելի և չափելի:)

15. Հաշվետվության հրապարակումը 28.02.2025 թվական, հավետվության հղում (https://www.abovyan.am/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=fba27510-032e-4f18-86ff-09211a04097a):

(Նշել համայնքի պաշտոնական կայքէջում տեղադրման ամսաթիվը և հղումները)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ